

**Հարցաթերթ**  
**Աշխարհագրություն առարկայի 2019թ. դպրոցական օլիմպիադայի**  
**առաջին (դպրոցական) փուլի**  
**/տևողությունը – 90 րոպե/**

**9 – րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Բնական աշխարհագրության ճյուղերից է.**

- |                                |                                 |
|--------------------------------|---------------------------------|
| 1. հողերի աշխարհագրությունը    | 2. երկրաբնապահպանությունը       |
| 3. քաղաքական աշխարհագրությունը | 4. սոցիալական աշխարհագրությունը |

**2. Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270° .**

- |            |           |             |              |
|------------|-----------|-------------|--------------|
| 1. արևելքի | 2. հարավի | 3. հյուսիսի | 4. արևմուտքի |
|------------|-----------|-------------|--------------|

**3. Ո՞ր պնդումն է սխալ.**

- |                                      |                                 |
|--------------------------------------|---------------------------------|
| 1. Լուսինը գնդաձև է                  | 2. Լուսինը չունի մթնոլորտ       |
| 3. Լուսնի վրա փչում են ուժեղ քամիներ | 4. Լուսնի վրա չեն լսվում ձայներ |

**4. Ընտրել մոլորակների հայերեն և հունարեն անունների համապատասխանության ճիշտ շարքը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1. Հրատ     | ա. Վեներա   |
| 2. Արուսյակ | բ. Մարս     |
| 3. Երևակ    | գ. Մերկուրի |
| 4. Փայլածու | դ. Սատուրն  |

- |                               |
|-------------------------------|
| 1. 1 – դ, 2 – գ, 3 – բ, 4 – ա |
| 2. 1 – ա, 2 – բ, 3 – գ, 4 – դ |
| 3. 1 – բ, 2 – ա, 3 – դ, 4 – գ |
| 4. 1 – դ, 2 – գ, 3 – ա, 4 – բ |

**5. Ո՞ր գուգահեռականն է ավելի երկար.**

- |        |       |        |        |
|--------|-------|--------|--------|
| 1. 20° | 2. 0° | 3. 50° | 4. 80° |
|--------|-------|--------|--------|

**6. Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է .**

- |                               |                                 |
|-------------------------------|---------------------------------|
| 1. տարվա եղանակների հերթափոխ  | 2. ամիսների հերթափոխ            |
| 3. գիշերվա և ցերեկվա հերթափոխ | 4. քամիների ուղղության հերթափոխ |

**7. Մարտի 21 – ին առավելագույն ջերմություն ստանում են.**

1. հարավային կիսագնդի մերձարևադարձային լայնությունները
2. հյուսիսային կիսագնդի մերձարևադարձային լայնությունները
3. հյուսիսային կիսագնդի մերձհասարակածային լայնությունները
4. հասարակածային լայնությունները

**8. Հրաբխային ծագման ապար չէ.**

- |          |             |           |          |
|----------|-------------|-----------|----------|
| 1. խարամ | 2. օբսիդիան | 3. մարմար | 4. պեմզա |
|----------|-------------|-----------|----------|

9. Ո՞ր դեպքում է օդի ջերմաստիճանի տատանման լայնույթը մեծ.
1. ձմռանը՝ ամպամած օրերին
  2. ծովերի և օվկիանոսների վրա
  3. անտառածածկ շրջաններում
  4. գարնանը և աշնանը՝ պարզ կա եղանակներին
10. Ատլանտյան օվկիանոսի սառը հոսանքներից են.
1. Լաբրադորյան և Պերուական
  2. Օյասիո և Սոմալիի
  3. Բենգելյան և Լաբրադորյան
  4. Կալիֆոռնիական և Կանարյան
11. Պրերիաները ո՞ր մայրցամաքում են.
1. Հյուսիսային Ամերիկայում
  2. Հարավային Ամերիկայում
  3. Եվրասիայում
  4. Ավստրալիայում
12. «Լիճ – մայրցամաք» գույգերից ընտրել ճիշտը.
1. Ռուդոլֆ – Ավստրալիա
  2. Մեծ աղի – Եվրասիա
  3. Էրի – Հյուսիսային Ամերիկա
  4. Էյր – Հարավային Ամերիկա
13. Ո՞ր շարքի երկրներն են տարածքի մեծությամբ գերիտոշոր.
1. Չինաստան, Մոնղոլիա, Կանադա
  2. Հնդկաստան, Ալժիր, Ռուսաստան
  3. Ավստրալիա, Բրազիլիա, Արգենտինա
  4. ԱՄՆ, Բրազիլիա, Կանադա
14. «Ժողովուրդ – լեզվաընտանիք» գույգերից ընտրել սխալը.
1. գերմանացի – հնդեվրոպական
  2. թուրք - ալթայյան
  3. մոնղոլ – չին - տիբեթական
  4. արաբ – սեմաքամյան
15. Ոչ նյութական ոլորտի ճյուղ է.
1. բեռնատար տրանսպորտը
  2. շինարարությունը
  3. առողջապահությունը
  4. թեթև արդյունաբերությունը

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Երկու կետերի հեռավորությունը տեղանքում 30 կմ է: Քանի սմ կկազմի դրանց հեռավորությունը 1 : 500 000 մասշտաբի քարտեզի վրա:
17. Գետի կենդանի կտրվածքի մակերեսը 3 մ<sup>2</sup> է, իսկ ջրի արագությունը՝ 4 մ/ վրկ: Որոշել գետի ծախսը ( մ<sup>3</sup>/վրկ ) :
18. Երկրի բնակչության թիվը 8 մլն է, որից 2 մլն -ը ապրում է գյուղում: Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը (%):
19. Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա: Դրանցից մեկը գտնվում է հս. լ. 2<sup>0</sup> – ի, իսկ մյուսը՝ հվ. լ. 5<sup>0</sup> – ի վրա: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:
20. Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 900 կմ է, իսկ տրանսպորտային ցանցի միջին խտությունը՝ 3 կմ / կմ<sup>2</sup> : Որոշել երկրի մակերեսը (կմ<sup>2</sup>):